

«ԿԱՊԻՏԱԼ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**2009Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Հաշվապահական հաշվեկշիռ	5
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9
Ընկերության Ներքին Հսկողական Համակարգ	24

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ No.159

Ներկայացվում է

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի բաժնետերերին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 31-ը դեկտեմբերի 2009թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին էական տեղեկատվություն և այլ բացատրական ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների: Այդ պատասխանատվությունը ներառում է այնպիսի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար տեղին ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդրում և կիրառում, որոնք զերծ կլինեն սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից, ինչպես նաև տեղին հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն և կիրառում, ողջամիտ հաշվապահական գնահատականների օգտագործում:

Աուդիտորների պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրինք ՀՀ կառավարության 2005թ. ապրիլի 21-ի N 509-Ն որոշմամբ հաստատված աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից և ներառում են նաև այնպիսի էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը, որոնք կարող են պայմանավորված լինել թե խարդախությամբ և թե սխալներով: Այս ռիսկը գնահատելիս՝ աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և

10-22 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

վերջիններիս ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել այդ հանգամանքներին համապատասխանող աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների ողջամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի ֆինանսական վիճակի՝ առ 31.12.2009թ., ինչպես նաև այդ ամսաթվի դրությամբ ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկեր՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Թաթուլ Մովսիսյան

Գլխավոր տնօրեն

Սուրեն Գաբրիելյան

Աուդիտոր

27 ապրիլի, 2010 թ.,

ք. Երևան, Տերյան 105/1

ԱՆՎԱՆՈՒՄԸ		Ծանոթագրություններ	հազար դրամ	
			2009	2008
1	Ակտիվներ			
1.1	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	4	1	
1.2	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5	348,293	5,193
1.3	Առևտրական նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ	6	756,799	599,411
1.4	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	7	7,642	9,441
1.5	Հետաձգված հարկային ակտիվներ	8	248	-
1.6	Այլ ակտիվներ	9	5,586	2,190
	Ընդամենը՝ ակտիվներ		1,118,569	616,235
2	Պարտավորություններ			
2.1	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10	963,228	454,000
2.2	Հետաձգված հարկային պարտավորություններ	8	-	1,550
2.3	Պահուստներ	11	2,203	1,193
2.4	Այլ պարտավորություններ	12	860	974
	Ընդամենը՝ պարտավորություններ		966,291	457,717
3	Կապիտալ			
3.1	Կանոնադրական կապիտալ	13	150,000	150,000
3.2	Պահուստներ, այդ թվում		600	100
3.2.1	Գլխավոր պահուստ		600	100
3.3	Չբաշխված շահույթ (վնաս)		1,678	8,418
	Ընդամենը՝ կապիտալ		152,278	158,518
	Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		1,118,569	616,235

**«Կապիտալ Մսեր Սենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերություն
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2009թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

		հազար դրամ	
ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	2009	2008
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	15	42,937	49,988
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	15	(30,241)	(36,002)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		12,696	13,986
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	16	14,271	5,707
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	16	(1,117)	(665)
Մտացված գուտ կոմիսիոն և այլ վճարներ		13,154	5,042
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	17	8,104	17,054
Այլ գործառնական եկամուտներ	18	-	15
Գործառնական եկամուտներ		33,954	36,097
Ընդհանուր վարչական ծախսեր	19	(39,359)	(24,969)
Այլ գործառնական ծախսեր	20	(2,632)	(1,067)
Շահույթը (վնասը) մինչև հարկումը		(8,037)	10,061
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	21	1,798	(1,550)
Շահույթը (վնասը) հարկումից հետո		(6,239)	8,511
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	22	(0.4)	0.6
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նուսրացված շահույթ	22	(0.4)	0.6

10-22 Էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

**«Կապիտալ Մսեր Սենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերություն
Գրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն**

հազար դրամ

	Ծանոթագրություն	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ (վնաս)	Պահուստներ	Ընդամենը
Մնացորդը առ 01 հունվարի 2008թ.		150,000	(93)	100	150,007
Վերահաշվարկված մնացորդը		150,000	(93)	100	150,007
Բաժնետերերի հետ գործարքներ բաժնետոմսերի գծով		147,000	-	-	147,000
Հաշվետու տարվա գուտ շահույթ (վնաս)		-	8,511	-	8511
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2008թ.		150,000	8,418	100	158,518
Մնացորդը առ 01 հունվարի 2009թ.		150,000	8,418	100	158,518
Բաժնետերերի հետ գործարքներ բաժնետոմսերի գծով		-	-	-	-
Հաշվետու տարվա գուտ շահույթ (վնաս)			(6,240)		(6,240)
Ներքին շարժեր			(500)	500	0
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2009թ.		150,000	1,678	600	152,278

		<i>հազար դրամ</i>	
	Ծանոթագրություն	2009	2008
ԱՆՎԱՆՈՒՄԸ			
1. Գրամական հոսքեր գործառնական գործունեությունից		x	x
Գրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը			
Ստացված տոկոսներ		52,423	35,250
Վճարված տոկոսներ		(27,612)	(35,368)
Ստացված կոմիսիոն գումարներ		6,140	4,649
Վճարված կոմիսիոն գումարներ		(14,240)	(7,50)
Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից օգուտ (վնաս)		4,746	4,607
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ (վնաս)		3,808	257
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ			
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		(11,714)	(10,460)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր		(17,121)	(10,694)
Գրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից			
Գործառնական ակտիվներում նվազում (ավելացում) այդ թվում՝		(502,815)	(438,684)
վարկերի և փոխստվությունների նվազում (ավելացում)			
առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում)		(167,570)	(439,363)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում (ավելացում)			
այլ գործառնական ակտիվների նվազում (ավելացում)		7,803	679
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում) այդ թվում՝			
հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում (նվազում)			
այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում)			
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		(506,386)	(457,947)
Վճարված շահութահարկ		(83)	(41)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		(506,469)	(457,988)
2. Գրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		x	x
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում)			
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)			
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների			

9-23 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

օտարում		
Դրամական միջոցների գուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		
Չուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	x	x
Վճարված շահաբաժիններ		
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		
Ստացված փոխառությունների ավելացում (նվազում)	507,530	453,110
Ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)		
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում		
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում)		
Դրամական միջոցների գուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից		
Չուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	507,530	453,110
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	484	19
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ/(նվազում)	1,061	(4,878)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	4	5,193
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	6,738	5,193

1. Ընդհանուր դրույթներ

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն հանդիսանում է «Իկապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը, որը ստեղծվել է 2005թ.:

2007 թվականի օգոստոսին Ընկերությունը վերանվանվել է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության:

2006թ. նոյեմբերի 23-ին Ընկերությունը ստացել է բրոքերային գործունեության և հավատարմագրային կառավարման գործունեության լիցենզիաներ, իսկ 2007 թվականի հոկտեմբերին ստացել է արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի լիցենզիա:

2008թ. հունիսի 28-ին Ընկերությունը վերագրանցվել է ՀՀ կԲ-ում որպես ներդրումային ընկերություն և ստացել թիվ 6 լիցենզիան:

Ընկերությունն ունի երկու բաժնետեր՝ Տիգրան Կարապետյան (66.67%) և Արմեն Մկոյան (33.33%):

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի ղեկավար մարմիններն են հանդիսանում բաժնետերերի ընդհանուր ժողովը և գլխավոր տնօրենը: Գլխավոր տնօրենի պաշտոնը զբաղեցնում է Տիգրան Կարապետյանը:

Ընկերությունը մինչ այժմ գործունեություն է իրականացրել արժեթղթերի և արտարժույթի շուկաներում՝ մասնավորապես

- իրականացրել է արժեթղթերի տեղաբաշխում,
- մատուցել է արժեթղթերի հավատարմագրային կառավարման ծառայություններ,
- հանդիսացել է արժեթղթերի բրոքեր և դիլեր,
- մատուցել է ռեեստրավարման և պահառության ծառայություններ,
- տրամադրել է խորհրդատվություն արժեթղթերի շուկայի վերաբերյալ,
- իրականացրել է արտարժույթի անկանխիկ առուվաճառքի գործառնություններ:

2. Պատրաստման հիմունքները

ա) Համապատասխանությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներին (ՀՀՀՀՍ) համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրված են 2009թ. մարտի 2-ին:

բ) Չափման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների, որոնք վերաչափվում են իրական արժեքով:

գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթները

Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որը Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրվում հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

1. Հիմնական միջոցների հետագա չափման մոտեցումները՝ սկզբնական ճանաչումից հետո հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստը:

2. Ոչ նյութական ակտիվների հետագա չափման հիմունքները՝ սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ համաձայն կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստը:

3. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից շահույթների (վնասների) ճանաչման մոտեցումները՝ իրական արժեքով վերաչափումից շահույթները (վնասները) ճանաչվում են տվյալ ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4. Դուստր ընկերություններում, ասոցիացված կազմակերպություններում, համատեղ վերահսկվող միավորներում ներդրումների հաշվառման մոտեցումները՝ բաժնեմասնակցության մեթոդով:

5. Էական սխալների ուղղման և հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխությունների ազդեցության արտացոլման մոտեցումները՝ նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող էական սխալների ուղղման գումարը արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվություններում՝ ճշտելով չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը: Համադրելի տեղեկատվությունը վերաներկայացվում է, քանի դեռ դա իրագործելի է:

6. Ծառայությունների մատուցման պայմանագրերի գծով հասույթի ճանաչման համար գործարքի ավարտվածության աստիճանի որոշման մոտեցումը՝ երբ ծառայության մատուցման գործարքի արդյունքները հնարավոր է արժանահավատորել գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է ֆինանսական հաշվետվության ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանի հիման վրա, հակառակ դեպքում հասույթը ճանաչվում է միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք կփոխհատուցվեն:

7. Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը՝ փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում կամ երբ դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

8. Փոխառության ծախսումների հաշվառման մոտեցումը՝ փոխառության ծախսերը ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվում (հաշվեգրվում) են: Վարկերը և փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

9. Առևտրական նպատակներով պահվող (ԱՆՊ) ֆինանսական ակտիվներ՝ ԱՆՊ ֆինանսական ակտիվները յուրաքանչյուր ամսի վերջին օրվա դրությամբ վերաչափվում են իրական արժեքով՝ իրական արժեքից առաջացող շահույթները (վնասները) ճանաչելով տվյալ ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում (ՖԱՄՀ)՝ որպես առևտրական նպատակներով պահվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ՝ ներառելով առևտրային գործունեությունից զուտ եկամուտների կազմում: ԱՆՊ ֆինանսական ակտիվների վաճառքի դեպքում դրանց վաճառքից ստացվող (ստացվելիք) գումարը և վաճառված ԱՆՊ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքի (ներառյալ՝ իրական արժեքով ճշտումները) տարբերությունը ներկայացվում է ՖԱՄՀ-ում՝ որպես առևտրական նպատակներով պահվող ներդրումների առաջ ու վաճառքից զուտ եկամուտ՝ նույնպես ներառելով առևտրային գործունեությունից զուտ եկամուտների կազմում:

10. ՌԵՊՈ պայմանագրով ստացված և տրված արժեթղթեր՝ ՌԵՊՈ պայմանագրերով ստացված արժեթղթերը հաշվառվում են արտահաշվեկշռում՝ որպես տրամադրված փոխառությունների ապահովություն: ՌԵՊՈ պայմանագրերով ստացված արժեթղթերի դիմաց վճարված գումարները հաշվառվում են որպես տրամադրված փոխառություններ: Դրանց գծով ստացվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են ՖԱՄՀ-ում և ներկայացվում տոկոսային եկամուտների կազմում: ՌԵՊՈ պայմանագրերով տրված արժեթղթերը հաշվառվում են հաշվեկշռում՝ իրենց բնույթին համապատասխան: ՌԵՊՈ պայմանագրերով տրված արժեթղթերի դիմաց ստացված գումարները հաշվառվում են որպես

ստացված փոխառություններ: Դրանց գծով վճարվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են ՖԱՄՀ-ում և ներկայացվում տոկոսային ծախսերի կազմում:

11. Արտարժույթի առք-վաճառքի եկամուտներ և ծախսեր՝ արտարժույթի առք-վաճառքի գործառնություններից ստացված գուտ շահույթը (վնասը) ներկայացվում է առևտրային գործունեությունից գուտ շահույթի կամ վնասի կազմում:

12. Շահութահարկի գծով ծախսը (եկամուտը) բաղկացած է ընթացիկ հարկի գծով ծախսից և հետաձգված հարկի գծով ծախսից (եկամտից): Շահութահարկի գծով ծախսը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն գործարքների գծով առաջացած հարկի, որոնց արդյունքները ուղղակիորեն ճանաչվում են սեփական կապիտալում: Վերջին դեպքում շահութահարկի գծով ծախսը նույնպես ճանաչվում է սեփական կապիտալում Ընթացիկ հարկի գծով ծախսը ընթացիկ տարվա հարկվող շահույթից վճարման ենթակա շահութահարկն է և նախորդ տարիների ընթացիկ հարկի ճշգրտումներ: Հետաձգված հարկի գծով ծախսը (եկամուտը) հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների մնացորդների փոփոխություններ արդյունքն է: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են, այնքանով, որքանով հավանական է ապագա ժամանակաշրջաններում բավարար հարկվող շահույթի ստացումը, որի հաշվին կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները և հաջորդ ժամանակաշրջան տեղափոխվող հարկային վնասները:

4. Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում

	Մնացորդ 31.12.2009թ.	հազար դրամ Մնացորդ 31.12.2008թ.
Դրամական միջոցներ ՀՀ կենտրոնական բանկում	1	-
Ընդամենը	1	-

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	Մնացորդ 31.12.2009թ.	Մնացորդ 31.12.2008թ.
Դրամական միջոցներ ՀՀ կենտրոնական բանկում	1	-
Ընթացիկ հաշիվներ ՀՀ բանկերում	6,737	5,193
Ընդամենը	6,738	5,193

5. Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	Մնացորդ 31.12.2009թ.	հազար դրամ Մնացորդ 31.12.2008թ.
Ընթացիկ հաշիվներ		
ՀՀ բանկերում	6,737	5,193
Ընդամենը	6,737	5,193
Վարկեր (տրամադրված փոխառություններ) և ավանդներ, այլ պահանջներ	340,101	-
Հաշվեգրած տոկոսներ	1,455	-
Ընդամենը	348,293	5,193

6. Առևտրական նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ

	Մնացորդ 31.12.2009թ.	հազար դրամ Մնացորդ 31.12.2008թ.
Պետական արժեթղթեր		
ՀՀ պետական արժեթղթեր, այդ թվում՝ գանձապետական պարտատոմսեր	521,204	415,036
Ընդամենը պետական արժեթղթեր	521,204	415,036
Այդ թվում՝ ՀՀ բանկերին ռեպո համաձայնագրով վաճառված	514,897	412,919
ՀՀ ոչ պետական արժեթղթեր		
Ընդամենը ՀՀ ոչ պետական առևտրային նպատակով պահվող արժեթղթեր	235,595	184,375
Այդ թվում՝ ՀՀ բանկերին ռեպո համաձայնագրով վաճառված	148,733	-
Ընդամենը առևտրական նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ	756,799	599,411

**«Կապիտալ Մսեր Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերություն
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

	Հաշվեկշա- յին արժեքը	Անվանական (մարման) արժեքը	<i>հազար դրամ</i> Մարման ժամկետը
<i>Պարտատոմսեր</i>			
Պետական պարտատոմսեր տարեկան 9.65 տոկոս եկամտաբերությամբ (AMGB10072186)	211,398	200,000	07.02.18թ
Պետական պարտատոմսեր տարեկան 11.55 տոկոս եկամտաբերությամբ (AMGN36265126)	309,805	301,000	26.05.12թ.
«Շեն Կոնցեռն» ՓԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմսեր տարեկան 11 տոկոս եկամտաբերությամբ	148,733	10,0	02.12.11թ.
«Վալլետտա» ՍՊԸ արժեկտրոնային պարտատոմս, տարեկան 11 տոկոս եկամտաբերությամբ և կուպոնի կիսամյակային վճարումով	20,134	50,0	02.09.11թ.
«Ինեկոբանկ» ՓԲԸ անվանական գեղչակտրոնային պարտատոմսեր	13,768	50,0	25.03.10թ.
«Կոնվերս բանկ» ՓԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմսեր 10.64 տոկոս եկամտաբերությամբ	7,505	30,0	16.12.11թ.
<i>Բաժնետոմսեր</i>			
Արարատբանկ ԲԲԸ հասարակ անվանական բաժնետոմս	45,456	5,0	
Ընդամենը	756,798		

7. Հիմնական միջոցներ

Հոդվածի անվանումը	Համակ.և կապի միջոցներ	Այլ հիմն. միջոցներ	<i>հազար դրամ</i> Ընդամենը
<u>Սկզբնական արժեք</u>			
Մնացորդը 2008 թվականի սկզբում	2,349	500	2,849
Ավելացում	1,989	5,306	7,295
Օտարում	-	(380)	(380)
Մնացորդը 2008 թվականի վերջում	4,338	5,426	9,764
Ավելացում	17	301	318
Մնացորդը 2009 թվականի վերջում	4,355	5,727	10,082
<u>Կուտակված մաշվածություն</u>			
Մնացորդը 2008 թվականի սկզբում	252	30	282
Ավելացում	534	195	729
Օտարում	-	(95)	(95)
Մնացորդը 2008 թվականի վերջում	786	130	916
Ավելացում	866	1,114	1,980
Մնացորդ 2009 թվականի վերջում	1,652	1,244	2,896
<u>Զուտ հաշվեկշռային արժեք</u>			
2009 թվականի վերջում	2,703	4,484	7,187
2008 թվականի վերջում	3,552	5,296	8,848

**«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերություն
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

Ոչ նյութական ակտիվներ

		<i>հազար դրամ</i>	
	Համակարգչա- յին ծրագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
Մնացորդը 2008 թվականի սկզբում	165	150	315
Ավելացում	-	370	370
Մնացորդը 2008 թվականի վերջում	165	520	685
Ավելացում	-	-	-
Մնացորդը 2009 թվականի վերջում	165	520	685
Կուտակված ամորտիզացիա			
Մնացորդը 2008 թվականի սկզբում	8	3	11
Ավելացում	33	48	81
Մնացորդը 2008 թվականի վերջում	41	51	92
Ավելացում	33	104	137
Մնացորդը 2009 թվականի վերջում	74	155	229
Զուտ հաշվեկշռային արժեք			
2009 թվականի վերջում	91	365	456
2008 թվականի վերջում	124	469	593

8. Հետաձգված հարկային ակտիվներ

Հետաձգված հարկային ակտիվի տարեվերջի մնացորդը կազմել է 248 հազար դրամ՝ (14,086 հազար դրամ - 12,844 հազար դրամ) x 20%:

	<i>հազար դրամ</i>	
	Հարկվող ժամանակավոր տարբերություն	Նվազեցվող ժամանակավոր տարբերություն
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	12,844	
Ընթացիկ պահուստներ		2,203
Հարկային վնաս		11,883
Ընդամենը	12,844	14,086

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկը.

	Մնացորդ 31.12.2008թ.	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Մնացորդ 31.12.2009թ.
Հետաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝	287	154	441
Այլ ակտիվների գծով	48	(48)	0
Ստեղծված պահուստների գծով	239	202	441
Հետաձգված հարկային պարտավորություններ, այդ թվում՝	(1,934)	(635)	(2,569)
Առևտրական նպատակներով պահվող արժեթղթերի գծով	(1,754)	(815)	(2,569)
Այլ ակտիվների գծով	(180)	180	
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/պարտավորու- թյուն	(1,647)	(481)	(2,128)
Հաջորդ ժամանակաշրջան տեղափոխվող հարկային վնաս	97	2,279	2,376

Ընդամենը զուտ հետաճգված հարկի շարժը

(1,550)	1,798	248
----------------	--------------	------------

9. Այլ ակտիվներ

<u>Դերիտորական պարտքեր և կանխավճարներ</u>	հազար դրամ	
	Մնացորդ 31.12.2009թ.	Մնացորդ 31.12.2008թ.
Դերիտորական պարտքեր բյուջեի գծով	13	32
Դերիտորական պարտքեր հաճախորդների գծով	3,109	1,011
Կանխավճարներ աշխատակիցներին	-	2
Կանխավճարներ մատակարարներին	360	35
Կանխավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական սպահովագրության վճարների գծով	124	68
Այլ դերիտորական պարտքեր և կանխավճարներ	1,765	735
Ընդամենը	5,371	1,883
<u>Այլ ակտիվներ</u>		
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	25	25
Այլ ակտիվներ	190	282
Ընդամենը այլ ակտիվներ	215	307

31.12.2009թ. առկա 3,109 հազ. դրամ դերիտորական պարտքն ունի հետևյալ կառուցվածքը.

- 2,607 հազ. դրամը` հաճախորդի միջոցների հավատարմագրային կառավարման վարձ և պարգևավճար
- մնացած 502 հազ. դրամը` մատուցված ռեեստրավարման ու պահառուական ծառայությունների դիմաց:

10. Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

<u>Ներգրավված փոխառություններ և ավանդներ, այլ</u>	հազար դրամ	
	Մնացորդ 31.12.2009թ.	Մնացորդ 31.12.2008թ.
ՀՀ բանկեր		
Ավանդներ և փոխառություններ	340,101	41,000
Ռեպո համաձայնագրեր	619,715	412,109
Հաշվեգրված տոկոսներ	3,412	891
Ընդամենը	963,228	454,000

11. Պահուստներ

	հազար դրամ	
	Մնացորդ 31.12.2009թ.	Մնացորդ 31.12.2008թ.
Սկզբնական մնացորդ	1,193	80
Պահուստին կատարված մասհանումներ	2,659	1,113
Պահուստի օգտագործում	(1,649)	-
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	(1,010)	-
Վերջնական մնացորդ	2,203	1,193
Արձակուրդայինի գծով	1,203	893
Աուդիտի գծով	1,000	300

12. Այլ պարտավորություններ

	հազար դրամ	
	Մնացորդ 31.12.2009թ.	Մնացորդ 31.12.2008թ.
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով՝		
ԱԱՀ-ի գծով	57	
այլ հարկերի ու տուրքերի գծով	206	131
սոցիալական ապահովագրության վճարումների գծով	286	
Կրեդիտորական պարտքեր մատակարարների նկատմամբ	241	792
Այլ պարտավորություններ	71	51
Մնացորդը ժամանակաշրջանի վերջում	861	974

13. Կանոնադրական կապիտալ և Ընդհանուր կապիտալ

2009թ. դեկտեմբերի 31-ին Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 150 մլն ՀՀ դրամ, որը բաղկացած է 15,000 հատ սովորական բաժնետոմսերից: ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 12 փետրվարի 2008թ. թիվ 44-Ն որոշմամբ Ընկերության համար կանոնադրական կապիտալի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափ է սահմանված 100 մլն. դրամը: Ստորև ներկայացվում է Ընկերության փաստացի ընդհանուր կապիտալի միջին օրական մեծությունը ըստ ամիսների:

			հազար դրամ	
	Հիմնական կապիտալի Հաշվեկշռային մեծություն	Ընդամենը կապիտալ	Նորմատիվային սեփական կապիտալի հաշվարկի համար անհրաժեշտ հիմնական կապիտալից պակասեցվող գումարներ	Նորմատիվային հաշվարկի մասնակցող Հիմնական կապիտալ
Հունվար	157,873	157,873	9,998	147,875
Փետրվար	155,904	155,904	2,484	153,420
Մարտ	154,714	154,714	118	154,595
Ապրիլ	147,540	147,540	115	147,425
Մայիս	149,710	149,710	113	149,597
Հունիս	148,669	148,669	110	148,559
Հուլիս	153,218	153,218	107	153,111
Օգոստոս	152,049	152,049	143	151,906 151,617
Սեպտեմբեր	151,719	151,719	102	
Հոկտեմբեր	151,799	151,799	99	151,700
Նոյեմբեր	149,551	149,551	96	149,455
Դեկտեմբեր	146,988	146,988	93	146,895

**«Կապիտալ Մսեր Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերություն
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

14. Արտահաշվեկշռային հաշիվներ

	<i>հազար դրամ</i>	
	Մնացորդ առ 31.12.2009թ	Մնացորդ առ 31.12.2008թ.
Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ	791,449	799,821
Չհատուցված հարկային վնաս Ընդամենը	11,883	486
	803,332	800,121

15. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

	<i>հազար դրամ</i>	
	2009	2008
<u>Տոկոսային և նմանատիպ եկամուտներ</u>		
Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից	1,486	1,162
Տոկոսային եկամուտներ արժեթղթերից	41,443	48,826
Տոկոսային եկամուտներ տրված վարկերից (փոխառություններից)	8	
Ընդամենը	42,937	49,988
<u>Տոկոսային և նմանատիպ ծախսեր</u>		
Տոկոսային ծախսեր ներգրավված փոխառությունների և ստացված վարկերի դիմաց	(7,301)	(1,129)
Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերի գծով	(22,940)	(34,873)
Ընդամենը	(30,241)	(36,002)
<u>Չուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ</u>	12,696	13,986

16. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

	<i>հազար դրամ</i>	
	2009	2008
<u>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ</u>		
Արժեթղթերի փաթեթի կառավարման գծով միջնորդավճարներից	10,410	679
Արժեթղթերով գործարքներից միջնորդավճարներից	160	74
Խորհրդատվական ծառայությունների գծով միջնորդավճարներից	330	900
Արժեթղթերի տեղաբաշխման գծով միջնորդավճարներից	1,050	3,334
Պահառության գործունեությունից	2,321	720
Ընդամենը	14,271	5,707
<u>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր</u>		
Միջնորդավճարների գծով ծախսեր	(1,116)	(665)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	13,155	5,042

17. Ջուտ եկամուտ առևտրային գործառնություններից

	հազար դրամ	
	2009	2008
<u>Առևտրական նպատակներով պահվող ներդրումներից</u>		
Առևտրական նպատակներով պահվող ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ	3,246	4,607
Առևտրական նպատակներով պահվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	2,278	12,176
Ընդամենը	5,524	16,783
<u>Արտարժույթի գործառնություններից</u>	2009	2008
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	(574)	250
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	3,154	21
Ընդամենը	2,580	271
Ընդամենը զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	8,104	17,054

18. Այլ գործառնական եկամուտ

	հազար դրամ	
	2009	2008
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուր եկամուտ	-	15
Ընդամենը	-	15

19. Ընդհանուր վարչական ծախսեր

	հազար դրամ	
	2009	2008
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով	(13,763)	(12,994)
Ծախսեր սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին հատկացումների գծով	(1,998)	(1,856)
Գործուղման և ուսուցման գծով ծախսեր	(1,594)	(1,013)
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	(9,600)	(2,520)
Ներդրումային ընկերության շենքի և սարքավորումների, փոխադրամիջոցների տեխնիկական սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(1,012)	(338)
Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	(4,473)	(2,410)
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	(1,145)	(1,168)
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	(881)	(318)
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	(3,645)	(1,641)
Այլ վարչական ծախսեր	(1,248)	(711)
Ընդամենը	(39,359)	(24,969)

**«Կապիտալ Մսեր Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերություն
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

2009 թ. միջին ամսական աշխատողների թիվը եղել է 10, իսկ մեկ աշխատողին բաժին ընկնող միջին աշխատավարձը՝ 112 հազ. դրամ (2008-ի համար՝ աշխատողների թիվը՝ 9 և մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձը՝ 119,000 հազ. դրամ):

20. Այլ գործառնական ծախսեր

	հազար դրամ	
	2009	2008
Հասարակական կապերի գծով ծախսեր	(405)	-
Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր	(1,981)	(729)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	(137)	(82)
Այլ ծախսեր	(109)	(256)
Ընդամենը	(2,632)	(1,067)

21. Ընթացիկ հարկի գծով ծախս

	հազար դրամ	
	2009	2008
Ընթացիկ հարկի գծով ծախս	-	-
Հետաձգված հարկի գծով ծախս (Եկամուտ)	(1,798)	1,550
Ընդամենը	(1,798)	1,550

22. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

	հազար դրամ	
	2009	2008
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ հարկումից հետո	(6,239)	8,511
Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով	-	-
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս)	(6,239)	8,511
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը	15,000	15,000
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	(0.416)	0.567
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	(0.416)	0.567

23. Կազմակերպված կողմերի բացահայտում

Կազմակերպության փոխկապակցված կողմ է հանդիսանում «Կորպորատիվ Կառավարման Կենտրոն» հիմնադրամը, որի հոգաբարձուների խորհրդի նախագահը հանդիսանում է նաև Կազմակերպության խոշոր բաժնետեր: «Կորպորատիվ Կառավարման Կենտրոն» հիմնադրամի հետ տարվա ընթացքում կատարվել են հետևյալ գործարքները.

- «Կորպորատիվ Կառավարման Կենտրոն» հիմնադրամից 2009թ. օգոստոսին ստացել է խորհրդատվական ծառայություն՝ 1,080 հազ ՀՀ դրամ արժեքով (ներառյալ՝ ԱԱՀ-ն), որի դիմաց վճարումը կատարել է նույն ամսին:
- Կազմակերպությունը 2009թ. դեկտեմբերին «Կորպորատիվ Կառավարման Կենտրոն» հիմնադրամին տվել է 1,500 հազար ՀՀ դրամ ծառայությունների համար կանխավճար:

**«Կապիտալ Մտեք Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերություն
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

Տարեկերջի դրությամբ առկա է «Կորպորատիվ Կառավարման Կենտրոն» հիմնադրամին տրված 1,500 հազար ՀՀ դրամի կանխավճար՝ ծառայությունների մատուցման համար:

Կազմակերպության փոխկապակցված կողմ է հանդիսանում «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ն, որի բաժնետերը հանդիսանում է նաև Կազմակերպության բաժնետեր: «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի հետ տարվա ընթացքում կատարվել են հետևյալ գործարքները.

- «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ին մատուցվել է ռեստորավարման ծառայություն՝ ամսական 2400 ՀՀ դրամ արժեքով (ներառյալ՝ ԱԱՀ-ն),
- «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի հետ 2008 թվականին կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի համաձայն Կազմակերպությունը վարձակալել է Ամիրյան 27/14 հասցեում գրասենյակային տարածքը՝ ամսական 960 հազար ՀՀ դրամ արժեքով (ներառյալ՝ ԱԱՀ-ն),
- 2009թ.-ի փետրվարին Արմեն Սևոյանի հետ կնքվել է արժեթղթերի հավատարմագրային կառավարման պայմանագիր, համաձայն որի՝ վերջինս Ընկերության կառավարմանն է հանձնել 473,175 հազար ՀՀ դրամ, որը ներդրվել է «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի անվանական արժեկտրոնային պարտատոմսերում, որից 2009 թվականի ընթացքում հանվել է 105 մլն ՀՀ դրամ: 2009 թվականի ընթացքում հավատարմագրային կառավարիչի վարձը և պարգևավճարը միասին կազմել է 5,284 հազ. ՀՀ դրամ:

2009թ. գլխավոր տնօրենի աշխատավարձը կազմել է 3,146 հազ. դրամ:

24. Ֆինանսական ռիսկեր

Արտարժույթային ռիսկ

Ընկերությունն ունի ԱՄՆ դոլարով արտահայտված երկու փոխառություն 400 հազար և 500 հազար ԱՄՆ դոլար գումարներով, որոնց մարման ժամկետները համապատասխանաբար 2010թ. փետրվարը և հունիսը: Սակայն Ընկերությունն ըստ էության ենթարկված չէ արտարժույթային ռիսկին, քանի որ միաժամանակ այն ունի նույն արժույթով, նույն գումարներով և նույն ժամկետներով ժամկետային ավանդներ:

31.12.09 հազ. դրամ

	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	1		1
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	6,641	341,653	348,293
Առևտրական նպատակով պահվող ֆինանսական գործիքներ	756,799		756,799
<i>Ընդամենը ակտիվներ</i>	763,440	341,653	1,105,093
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	621,386	341,841	963,228
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	-	-
<i>Ընդամենը պարտավորություններ</i>	621,386	341,841	963,228
Զուտ դիրք	142,054	(189)	141,865

Տոկոսադրույքային ռիսկ

Ընկերության ենթարկվածությունը տոկոսադրույքային ռիսկին դրսևորվում է ֆիքսված տոկոսադրույքով արժեթղթերում կատարված ներդրումների առկայությամբ:

31.12.09 հազ. դրամ

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		6-ից մինչև 1 տարի		1-ից մինչև 5 տարի		5 տարուց ավելի	
	դրամով	արտար- ժույթով	դրամով	արտար ժույթով	դրամով	արտար ժույթով	դրամով	արտար ժույթով	դրամով	արտար ժույթով
Տեղաբաշխված միջոցներ										
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝				152,357		189,199				
-ավանդներ				152,357		189,199				
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթեր, այդ թվում՝			13,767		20,134		466,043		211,398	
- երկարաժամկետ պարտք. գործիքներ					20,134		466,043		211,398	
-կարճաժամկետ պարտք. գործիքներ			13,767							
Ընդամենը			13,767	152,357	20,134	189,199	466,043		211,398	
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ-ների նկատմամբ, այդ թվում՝	475,393		145,993	152,607		189,235				
- վարկեր				152,607		189,235				
-ռեպո համաձայնագրեր	475,393		145,993							
Ընդամենը	475,393		145,993	152,607		189,235				
Զուտ դիրք	(475,393)		(132,226)	(250)	20,134	(36)	466,043		211,398	

**«Կապիտալ Մսեր Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերություն
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

Տոկոսային գործիքների միջին տոկոսադրույքը

31.12.2009թ.

Հոդվածի անվանումը	ՀՀ դրամ %	Արտարժույթ %
Ակտիվներ		
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝ -ավանդներ		6
Առևտրական նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթեր	10.92	
Պարտավորություններ		
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	7.78	6.5
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ		

25. Այլ տեղեկատվություն

Տարեվերջի դրությամբ ընկերության գրավադրված ակտիվների, որոնք իրենցից ներկայացնում են «Վալլետտա» ՍՊԸ-ի 331 հատ արժեկտրոնային պարտատոմսեր 50,0 հազ. դրամ անվանական արժեքով, տարեկան 11 տոկոս եկամտաբերությամբ, ինչպես նաև «Արարատբանկ» ԲԲԸ 3788 հատ հիգ հազ. դրամ անվանական արժեքով հասարակ բաժնետոմսեր, հաշվեկշռային արժեքը կազմել է 62,371 հազ. ՀՀ դրամ: Տարվա ընթացքում եղել են ՌԵՊՈ և հակադարձ ՌԵՊՈ պայմանագրերի առարկա ակտիվներ: Հաշվետու տարում Ընկերության իրականացրած բոլոր գործարքները, այդ թվում կապակցված կողմերի հետ, եղել են «պարզած ձեռք հեռավորության» գործարքներ:

Գլխավոր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Ընկերության Ներքին Հսկողական Համակարգ

Ընկերության ներքին հսկողական համակարգը կազմակերպվում է ներքին աուդիտորի կողմից, որի գործառույթներն են.

ա) Ընկերության (այդ թվում նաև՝ դրա կազմում կամ անունից մասնագիտական որակավորման հիման վրա ներդրումային ծառայություններ մատուցող անձանց) ներդրումային ծառայությունների մատուցման մոնիտորինգը, որի նպատակով կարող է կիրառվել հնարավոր խախտումները հայտնաբերելու օրենքով չարգելվող ցանկացած միջոց կամ համակարգ:

բ) Ընկերության (այդ թվում նաև՝ դրա կազմում կամ անունից մասնագիտական որակավորման հիման վրա գործող անձանց) ներդրումային ծառայությունների մատուցման ստուգումը:

գ) Ծառայողական քննությունների հարուցումը և անցկացումը, եթե կասկած կա, որ Ընկերության (այդ թվում նաև՝ դրա կազմում կամ անունից մասնագիտական որակավորման հիման վրա գործող անձանց) գործունեության որևէ ոլորտում կամ հատվածում խախտում է թույլ տրված. տեղեկանում է հնարավոր խախտման որևէ փաստին. կամ գտնում է, որ նման քննությամբ կարող է հավանական խախտում կամ դրա մանրամասներ բացահայտել:

դ) Յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը անցկացնում է համալիր ստուգումը:

Ներքին աուդիտի «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և Ընկերության ներքին իրավական ակտերով նախատեսված գործառույթները պատշաճ իրականացնելու համար 2009 թվականին ներքին աուդիտորի կողմից կայացվել է թվով 9 որոշումների հիման վրա իրականացվել են Ընկերության գործունեության պարբերական և համալիր ստուգումներ:

1. Իրավական ակտերով սահմանված պահանջների խախտումների հայտնաբերման մասին. դրանց բնույթը և քանակը

Պարբերական և համալիր ստուգումների ընթացքում ներդրումային ծառայությունների մատուցման կապակցությամբ խախտումներ չեն բացահայտվել: Մակայն 2009 թվականի ընթացքում հետևյալ մարմինների կողմից հայտնաբերվել են հետևյալ խախտումները՝

(ա) 2009 թվականի առաջին եռամսյակի համար ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի օգտին պարտադիր վճարը մինչև 2009 թ.-ի հունվարի 20-ը կատարելու փոխարեն կատարվել է 2009 թվականի հունվարի 26-ին՝ օրենքով սահմանված ժամկետից ուշ: Այդ փաստը հանգեցրել է «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտմանը: Այդ կապակցությամբ Ընկերության նկատմամբ նշանակվել է տուգանք 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

(բ) «ՆԱՍԳ-ԱԶ ՕԷՄԷ-ԶՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ կարգապահական հանձնաժողովի կողմից հարուցվել է թիվ 13-2009 կարգապահական գործը ըստ բորսայի վերահսկող ծառայության ընդդեմ «Արմսվիսթանկ» ՓԲԸ և Ընկերության «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 171-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների խախտման վերաբերյալ: Մասնավորապես, ըստ բորսայի վերահսկող ծառայության 2009 թվականի օգոստոսի 10-ին արձանագրվել են Ընկերության և «Արմսվիսթանկ» ՓԲԸ-ի կողմից թույլ տրված խախտումներ, որոնք փաստվել են ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության կողմից և 05.08.2009թ. թիվ 8 տեղեկացմամբ ներկայացվել բորսա: Ըստ ՀՀ կենտրոնական բանկի տեղեկացման, «ՆԱՍԳ-ԱԶ ՕԷՄԷ-ԶՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի կողմից կազմակերպվող կորպորատիվ արժեթղթերի շուկայում 15.07.2009թ.-ին կայացած առևտրային նստաշրջանում՝ երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով կազմակերպվող առևտրի ընթացքում Ընկերությունը և «Արմսվիսթանկ» ՓԲԸ-ն իրենց հաշվին իրականացրել են «ԿՈՆՎԵՐՍԻՍԻՆԿ» և «ԻՆՏԵՆՍԻՎԻՆԿ» ՓԲԸ-րի կողմից թողարկված պարտատոմսերի առավանառքի գործարքներ, որոնց կնքումը կարող էր հանգեցնել շուկայում արժեթղթի գնի, արժեթղթի նկատմամբ պահանջարկի կամ առաջարկի ծավալի վերաբերյալ սխալ կամ ապակողմնորոշիչ պատկերի ստեղծմանը կամ ազդակների հաղորդմանը, այսինքն Ընկերության և

«Արմավիսբանկ» ՓԲԸ-ի կողմից խախտվել է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 171-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները: «ՆԱՍԳ-ԱԲ ՕԷՄԷ-ԲՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ կարգապահական հանձնաժողովի 2009 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 13-2009 կարգապահական գործով կայացված որոշմամբ Ընկերության նկատմամբ տույժ չի կիրառվել:

(գ) 2009 թվականի նոյեմբերի 3-ի «ՆԱՍԳ-ԱԲ ՕԷՄԷ-ԲՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ առևտրային նստաշրջանի ընթացքում Ընկերությունը չի ապահովել «Վալլետտա» ՍՊԸ կողմից թողարկված թվով 663 և «Շեն Կոնցեռն» ՓԲԸ կողմից թողարկված թվով 4000 հատ պարտատոմսերով ռեպո-հետադարձ գործարքների կնքման համար համապատասխան հայտերի ներկայացումը: «ՆԱՍԳ-ԱԲ ՕԷՄԷ-ԲՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ կարգապահական հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 16-2009 կարգապահական գործով կայացած որոշմամբ Ընկերության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ նախազգուշացման տեսքով:

(դ) 2009 թվականի նոյեմբերի 23-ի «ՆԱՍԳ-ԱԲ ՕԷՄԷ-ԲՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ առևտրային նստաշրջանի ընթացքում Ընկերության, որպես շուկա ստեղծողի կողմից, «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ պարտատոմսերի երկկողմանի գնանշումը՝ սկսած 11:00:49-ից կատարվել է 433.05 տոկոս սպրեդով՝ գերազանցելով սպրեդի թույլատրելի 7 տոկոս սահմանաչափը: «ՆԱՍԳ-ԱԲ ՕԷՄԷ-ԲՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ կարգապահական հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 17-2009 կարգապահական գործով կայացած որոշմամբ Ընկերության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ նախազգուշացման տեսքով:

(ե) 2009 թվականի հոկտեմբերի 2-ից մինչև հոկտեմբերի 16-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացված ստուգման, ինչպես նաև հեռակա վերահսկողությամբ հայտնաբերվել են Ընկերության կողմից թույլ տրված թվով 10 խախտում: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2010 թվականի մարտի 2-ի որոշմամբ նշված 10 խախտումից 7-ի կապակցությամբ կիրառվել է նախազգուշացում՝ հետագայում բացառելու և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ը հաստատելու մասին» թիվ 113-Ն որոշմամբ հաստատված Հավելվածով նախատեսված պահանջների (այդ թվում՝ արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայություն մատուցելիս հաճախորդներին որևէ իմաստալից հենանիշի տրամադրման) կատարելագործման հանձնարարականով: Որոշմամբ նախատեսված 2 խախտման կապակցությամբ Ընկերության նկատմամբ կիրառվել է նախազգուշացում՝ որոշումն ուժի մեջ մնելու պահից 30-օրյա ժամկետում վերացնելու հանձնարարականով: Որոշմամբ նախատեսված 1 խախտման մասով վարույթը կարճվել է: 2009 թվականի ընթացքում ծառայողական քննություններ չեն հարուցվել:

2. Խախտումների կապակցությամբ ձեռնարկված միջոցների արդյունավետության մասին

Սույն Հաշվետվության 1-ին կետով նախատեսված խախտումների կապակցությամբ Ընկերություն ձեռնարկել է հետևյալ միջոցառումները.

(ա) Հաշվետվության 1-ին կետի (ա) ենթակետով նախատեսված խախտման կապակցությամբ Ընկերության գլխավոր տնօրենը արձակել է հրաման, համաձայն որի ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի օգտին վճարվող պարտադիր վճարները պետք է կատարվեն ամենաուշը եռամսյակի առաջին ամսվա ամսի 15-ին և այդ մասին պետք է գեկուցվի գլխավոր տնօրենին: Նախատեսված միջոցառումը համարում են արդյունավետ, քանի որ մինչ օրս Ընկերության կողմից ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի օգտին պարտադիր վճարները կատարվում են պատշաճ և ժամանակին:

(բ) Հաշվետվության 1-ին կետի (բ) ենթակետով նախատեսված խախտման կապակցությամբ Ընկերության կողմից ընդունվել (հաստատվել և հրապարակվել է Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում) «Շուկայի չարաշահման հայտնաբերման» ուղեցույցը, որի նպատակն է Ընկերության աշխատակիցներին և հաճախորդներին ծանոթացնել միջազգային պրակտիկայում շուկայի չարաշահումների հայտնի հնարավոր դրսևորումներին և ազդակներին: Նախատեսված միջոցառումը համարում են արդյունավետ: Հարկ է նշել, որ համաձայն կարգապահական հանձնաժողովի որոշման «...ՀՀ օրենսդրությունը [քննարկվող վեճի շրջանակներում] հնարավորություն չի տալիս հստակ և անվիճելի սահմանել գնային չարաշահման դեպքերը, ինչպես նաև այն դեպքերը, երբ գործողությունները չնայած նման են գնային չարաշահմանը, սակայն գնային չարաշահում չեն կարող համարվել...»:

(գ) Հաշվետվության 1-ին կետի (գ) ենթակետով նախատեսված խախտման կապակցությամբ Ընկերությունը որևէ միջոցառում չի ձեռնարկել, քանզի նշված խախտման պատճառ է հանդիսացել տեխնիկական բարդությունը, որի հետևանքով Ընկերության բրոքեր-դիլերը հեռացված տերմինալով չի կարողացել համապատասխան հայտեր մուտքագրել համակարգ, ինչի մասին տեղեկացրել է բորսային, և չնայած համատեղ ջանքերին, այնուհանդերձ մինչև տվյալ առևտրային նստաշրջանի ավարտը չի հաջողվել վերացնել այդ տեխնիկական բարդությունները:

(դ) Հաշվետվության 1-ին կետի (դ) ենթակետով նախատեսված խախտման կապակցությամբ Ընկերության գլխավոր տնօրենը արձակել է հրաման, համաձայն որի Ընկերության կողմից որպես շուկա ստեղծողի կարգավիճակի շրջանակներում մուտքագրվող հայտերը պետք է ենթարկվեն դիտանցման: Դիտանցումը իրականացվելու է պատասխանատու աշխատակցի կողմից, որը Ընկերության բրոքերի կողմից համապատասխան հայտերը մուտքագրվելու պահից 3 րոպեի ընթացքում դիտանցում է մուտքագրված հայտերը: Դիտանցումը ներառում է մուտքագրված հայտերի համապատասխանության ստուգումը «Շուկա ստեղծողի» կանոններին: Այն դեպքում, երբ պատասխանատու աշխատակիցը բացահայտում է մուտքագրված հայտերի անհամապատասխանություններ «Շուկա ստեղծողի» կանոններով նախատեսված պահանջների հետ, ապա դրանց մասին ամիջապես տեղեկացնում է Ընկերության գլխավոր տնօրենին, բրոքերին, իսկ նույն աշխատանքային օրվա ընթացքում նաև Ընկերության ներքին աուդիտորին: Պատասխանատու աշխատակիցն իրավունք ունի առևտրային նստաշրջանի ընթացքում իրականացնել ընթացիկ դիտանցում: Ընկերության բրոքերը պարտավոր է պատասխանատու աշխատակցին տրամադրել ցանկացած տեղեկություն, որն անհրաժեշտ և բավարար է Ընկերության շուկա ստեղծողի կարգավիճակից բխող գործառնությունների դիտանցումը պատշաճ կերպով և արդյունավետությամբ իրականացնելու համար: Նախատեսված միջոցառումը համարում են արդյունավետ:

(ե) Հաշվետվության 1-ին կետի (ե) ենթակետով նախատեսված խախտման կապակցությամբ Ընկերության գլխավոր տնօրենը արձակել է հրաման: Այսպես, Ընկերության գլխավոր տնօրենի սույն թվականի մարտի 9-ի հրամանով հաստատվել է Ընկերության բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի տիպային տարբերակը, որի 5.2. կետով նախատեսված է պայմանագրի և դրա հիման վրա արժեթղթերով կատարված գործարքների վերաբերյալ բոլոր փաստաթղթերը առնվազն 7 տարվա ընթացքում պահպանելու Ընկերության պարտավորությունը: Ընկերության գլխավոր տնօրենի նույն հրամանով հաստատվել է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության պահառության գրանցամատյանի պահառության գործառնությունների մատյանի «Արժեթղթերի եկամուտների վճարման մատյան» նոր Հավելված 1-ը, որտեղ արտացոլվում են Ընկերության հաճախորդներին արժեթղթերի գծով եկամուտների վճարման գործառնության կատարումը: Նախատեսված միջոցառումը համարում են արդյունավետ:

3. Ընկերության կազմում կամ անունից մասնագիտական որակավորման հիման վրա գործող անձանց որակավորման բարձրացման ուղղությամբ անցկացված միջոցառումների արդյունավետության մասին

Ընկերության կազմում կամ անունից մասնագիտական որակավորման հիման վրա գործող անձանց որակավորման բարձրացման շրջանակներում Ընկերության բրոքերային և դիլերային գործառնությունների համար պատասխանատու Ալիկ Առաքելյանը և իրավախորհրդատու Ալեքսանդր Խաչատուրյանը 2009 թվականի հոկտեմբերին ուսուցողական այցով գործուղվել են Էստոնիա՝ այնտեղ մասնակցելով Բալթյան երկրների արժեթղթերի շուկաների արդի փորձը ներկայացնող սեմինարներին և հանդիպումներին: Նախատեսված միջոցառումը համարում են արդյունավետ: Ընկերությունում պարբերաբար կազմակերպվում և անցկացվում են ներքին քննարկումներ և սեմինարներ, որոնք ուղղված են արժեթղթերի շուկայի ինդուստրիայի տարաբնույթ գործոնների վերաբերյալ գիտելիքներ փոխանցելուն: Նախատեսված միջոցառումը համարում են արդյունավետ:

Ներքին աուդիտոր՝
Արմեն Իսախրյան